

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻՆ՝ ԿԱՐԴԻՆԱԼ ԳՐԻԳՈՐ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ, ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Վատիկան—Հռոմ

Հանուն Հայաստանյայց եկեղեցու Ձերդ Սրբությանը ներկայացնում ենք Մեր վիշտը՝ կարդինալ Գրիգոր Աղաջանյանի մահվան տխուր առիթով: Աղոթում ենք նրա հոգու հավիտենական հանգստի համար: Թող Աստված լուսավոր պահի նրա հիշատակը արդարների աշխարհում:

ՎԱԶԳԵՆ Ա
ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19-ը մայիսի 1971 թ.,
Ս. Էջմիածին

*
* *

Խորապես զգացված ենք ողբացյալ կարդինալ Գրիգոր-Պետրոս Աղաջանյանի մահվան առթիվ Ձերդ Սրբության, ինչպես և հայ եկեղեցու կողմից ցուցաբերված համակրանքի համար:

Հայտնում ենք Ձեզ Մեր ջերմ շնորհակալությունը՝ մատուցված աղոթքների համար, որ Տերը Իր հավիտենական լույսի մեջ պահի Իր հավատարիմ ծառայի հոգին:

ՊՈՂՈՍ Զ

24-ը մայիսի 1971 թ.,
Վատիկան